ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/20

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի կողմից 13.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 13.02.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) սույն թվականի հունվարի 25-ին մասնակցել է ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին: Մրցույթի գնահատող հանձնաժողովը բացման նիստի թիվ 2 արձանագրությունը կազմել է խախտումներով՝ համաձայն որի Ընկերությունը զբաղեցնում է 7-րդ տեղը:

Նշենք, որ «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը նվազագույնն էր:

Կարծում ենք, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված մեր Ընկերության իրավունքները, ըստ որի եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված գումարի հաշվարկման:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցման արդյունքները վերանայել կամ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Ջիվան Եսայանը և Էդուարդ Մաթևոսյանը:

2. <u>ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի կողմից 13.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 14.02.2019թվականի գրության՝ տեղեկացնում ենք, որ Եղվարդի համայնքապետարանի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) կազմակերպվել է <<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ՝ ոսկյա կախազարդեր ձեռքբերելու նպատակով, որի նախահաշվային գին է սահմանվել 4 000 000 ՀՀ դրամ (160 հատ՝ 25 000-ական դրամով): <<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1>> ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարությունը հրապարակվել է 18.01.2019թ.: Հայտերը բացվել են 2019թ. հունվարի 25-ին ժամը 10-00, էլեկտրոնային ձևով, գնումների իրականացումը ապահովող համարակգի՝ www.armeps.am կայքի միջոցով: Հայտերի բացման նիստի արձանագրությունը <<Գնումների մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն 29.01.2019թ. հրապարակել ենք տեղեկագրում և ուղարկել բոլոր հայտ ներկայացրած մասնակիցներին:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 4 000 000 ՀՀ դրամ (160 հատ՝ 25 000-ական դրամով): Սույն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետով հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Նույն կետով սահմանվում է նաև առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում է միաժամանակյա բանակցություն:

Կարգի 43-րդ կետի համաձայն 25.01.2019թ. էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված տարբերակը հրապարակվել է տեղեկագրում, այդ նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն հանձնաժողովի քարտուղարի և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստի ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակից արտատպված տարբերակները հրապարակվել են տեղեկագրում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն անընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ենք ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել ենք առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

31.01.2019թ. տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստ և ընտրված մասնակից է ճանաչվել <<Հովանիկ>> ՍՊԸ-ն:

<<Գնումների մասին>> օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 10-րդ հոդվածի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը 01.02.2019թ. տեղեկագրում հրապարակել ենք պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

Հրավերի 7.28 կետի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանվել է 5 օրացույցային օր:

Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիր կնքում է, եթե անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում ենք ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագրի կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

07.02.2019թ. մասնակցի կողմից ներկայացվել է հաստատված պայմանագրիը և հրավերով սահմանված պայմանագրի ապահովումը: Եղվարդի համայնքապետարանի կողմից հաստատվել է պայմանագիրը 07.02.2019թ. :

Եղվարդի համայնքապետարանի կողմից կազմակերպված ոսկյա կախազարդերի ձեռքբերումը կազմակերպված է եղել Եղվարդ համայնքում ավանդույթ դարձած Տեառնընդառաջին նվիրված միջոցառման շրջանակներում նորապսակ զույգերին շնորհավորելու կապակցությամբ:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները և որոշումները՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե բողոքը ներկայացնող անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշման դեմ, ապա բողոքը ներկայացնում է հրավերով սահմանված անգործության ժամանակահատվածում, սակայն <<ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ-ի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացրել է 13.02.2019թ.-ին, իսկ այդ ժամանակ արդեն Եղվարդի համայնքապետարանի կողմից պայմանագիրը կնքված է եղել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցել է Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Վահագն Վիրաբյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի կողմից 13.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությունը.

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանը կարիքների համար ոսկյա կախազարդերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլոց, մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն:

www.gnumner.am էլեկտրոնային տեղեկագրում 17.01.2019թ. հրապարակված ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանի գնումների պլանի համաձայն՝ Պատվիրատուի կողմից 2019թ. նախատեսվել է ձեռք բերել թվով 160 հատ ոսկյա կախազարդեր (ԳՄԱ դասակարգիչ՝ 18500000), յուրաքանչյուրը 25 000 ՀՀ դրամ արժողությամբ (ընդամենը՝ 4 000 000 ՀՀ դրամ):

Ոսկյա կախազարդերի ձեռքբերման նպատակով Պատվիրատուի կողմից 14.01.2019թ. կազմվել և հաստատվել է գնման հայտը, որի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ընդհանուր (առավելագույն) գինը կազմել է 4 000 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 25.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը հրապարակել է գնման հայտով սահմանված՝ գնման ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 4 000 000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի կողմից Ընփթացակարգի շրջանակներում ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 4 200 000 ՀՀ դրամ, (3 500 000 ՀՀ դրամ (արժեք) + 700 000 ՀՀ դրամ (ԱԱՀ)), որով Ընկերությունը ճանաչվել է Ընթացակարգի շրջանակում՝ 7-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՀՈՎԱՆԻԿ» ՍՊԸ-ն, որի ընդհանուր գնային առաջարկը կազմել է 3 648 000 ՀՀ դրամ, (3 648 000 ՀՀ դրամ (արժեք) + 0 դրամ (ԱԱՀ)):

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքով հայտնած դիրքորոշումն ամբողջությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բացման նիստի թիվ 2 արձանագրությունը կազմելիս թույլ է տվել խախտումներ, ինչի արդյունքում Ընթացակարգին գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցների շարքում Ընկերությունը զբաղեցրել է 7-րդ տեղը: Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը գնահատելիս Հանձնաժողովը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերությունը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, որն առանձին տողով նախատեսվել է Ընկերության գնային առաջարկում: Իսկ քանի որ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց վերը նշված գումարի հաշվարկման, հետևապես, Ընկերության գնային առաջարկը պետք է գնահատվեր որպես նվազագույնը և Ընկերությունը պետք է ճանաչվեր առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)

- 2-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն՝ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինն է:

- 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

-1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

- 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանը կարիքների համար ոսկյա կախազարդերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի՝

- 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ

ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

-5.3 կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- www.gnumner.am էլեկտրոնային տեղեկագրում հրապարակված՝ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանի գնումների պլանի համաձայն՝ Պատվիրատուի կողմից 2019թ. գնման ենթակա ոսկյա կախազարդերի ընդհանուր նախահաշվային գինը կազմել է 4 000 000 ՀՀ դրամ:

-ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 4 200 000 ՀՀ դրամ, (3 500 000 ՀՀ դրամ (արժեք) + 700 000 ՀՀ դրամ (ԱԱՀ)), որով Ընկերությունը ճանաչվել է Ընթացակարգի 7-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Այսպիսով, հաշվի առնելով, որ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված ընդհանուր գնային առաջարկը գերազանցել է Պատվիրատուի գնումների պլանով նախատեսված ոսկյա կախազարդերի գնման նպատակով սահմանված ընդհանուր նախահաշվային գինը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում Ընկերության հայտը ենթակա էր մերժման, քանի որ կնքվելիք պայմանագրով Պատվիրատուն ֆինանսական պարտավորություններ կարող էր ստանձնել բացառապես այդ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակներում, և տվյալ դեպքում Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերության և Պատվիրատուի միջև գնային առաջարկի նվազեցման վերաբերյալ բանակցություններ վարվել չէին կարող:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ»-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 13.02.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ